


ՀՀ ոստիկանության պետի փեղակալ
ոստիկանության գնդապետ
Վ.Մովսիսյանին

Զ Ե Կ Ո Ւ Յ Ա Գ Ի Ր

Զեկուցում եմ Ձեզ, որ ՀՀ ոստիկանության կարիքների համար 2021 թվականի փետրվարի 22-ին ՀՀ ոստիկանության և «Հատուկ կապ» ՓԲԸ-ի միջև կնքվել է փոստային կապի ծառայությունների մատուցման թիվ ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ՓԾ/2021/ՈՍ պայմանագիրը, համաձայն որի ծառայությունների մատուցման համար վճարման ենթակա առավելագույն գումարը կազմել է 45.750.000 դրամ (քառասունհինգ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար): Նշված գումարից 2021 թվականի ընթացքում հնարավոր է եղել տնտեսել որոշակի գումար:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ են մետաղյա կնիքներ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի 5-րդ ենթակետի գ պարբերությունը, այն է. «չկանխատեսված իրավիճակների հետևանքով առաջացած և հրատապ համարվող գնումների դեպքում՝ բացառությամբ գնումների մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու դեպքերի: Ընդ որում, հրատապ է համարվում այն կարիքը, որը պետք է ամբողջ ծավալով բավարարվի՝ պայմանագրի կատարման արդյունքն ամբողջ ծավալով ընդունվի գնման պահանջի ծագման օրվանից մինչև 80 օրացուցային օրվա ընթացքում՝ պայմանով, որ հրատապ համարվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվեն այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է», խնդրում եմ Ձեր կարգադրությունը մասնակի վերացնել վերը նշված պայմանագիրը և թույլ տալ, որպես գնման պահանջ հրատապ 1 անձի կարգով ՀՀ ոստիկանության կարիքների համար ձեռք բերել թվով 2000 հատ մետաղական համաձուլվածքով կնիքներ:

Զեկուցող՝

ՀՀ ոստիկանության գործավարության և
գաղտնիության ռեժիմի ապահովման
վարչության պետ,
ոստիկանության գնդապետ
Ա. Փափախչյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Գ/Ա-181

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ